

1.3. *Գներ և սակագներ*

2002թ. փետրվարին գների փոփոխությունները, ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(տոկոսներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքս <sup>1)</sup>	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս <sup>2)</sup>	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում <sup>3)</sup>	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս <sup>4)</sup>	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս <sup>5)</sup>	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս <sup>6)</sup>
Հունվար	102.2	102.9	101.0	99.5	101.8	101.2
Փետրվար	99.3	100.8	99.8	100.1	95.8	100.2
Փետրվարը 2001թ. դեկտեմբերի համեմատ	101.5	103.5*)	100.8	99.7	96.4*)	101.1*)
2002թ. հունվար-փետրվարը 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ	100.6	101.0	106.8	101.9	99.3	101.7

\*) 2002թ. փետրվարի և 2001թ. դեկտեմբերի փաստացի գներով հաշված:

<sup>1)</sup> Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում ք.Երևանում և ՀՀ 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

<sup>2)</sup> Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 233 բազային կազմակերպություններում՝ 700 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

<sup>3)</sup> Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

<sup>4)</sup> Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

<sup>5)</sup> Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների իրացրած 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:


<sup>6)</sup> Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների գնած 92 անվանում արտադրության միջոցների գների և ծավալների հետազոտման տվյալների:

**Սպառողական գներ.** ՀՀ սպառողական շուկայում 2002թ. հունվարին 2001թ. դեկտեմբերի համեմատ գրանցված 2.2% գնաճին փետրվարին հաջորդել է 0.7% գնանկում (2001թ. փետրվարին գրանցվել է 0.9% գնանկում): Դրան մեծապես նպաստել են պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխությունները:

2002թ. փետրվարին հունվարի համեմատ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գները նվազել են 1.0%, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.2%, իսկ ծառայությունների սակագների մակարդակը մնացել է անփոփոխ:


Սպառողական գների ինդեքսը 2002թ. փետրվարին 2001թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 101.5%, ինչը 2.1 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածում արձանագրված սպառողական գների ինդեքսից (103.6%): Նշված ժամանակահատվածում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 102.3%, ոչ պարենային ապրանքներինը՝ 99.5%, իսկ ծառայությունների սակագները մնացել են 2001թ. դեկտեմբերի մակարդակին:

Սպառողական գների հավելաճը 1995-2002թթ. փետրվարին  
(տոկոսներով, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)



2002թ. փետրվարին 2001թ. փետրվարի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 100.7%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 101.2%, ոչ պարենային ապրանքներինը՝ 99.0%, ծառայությունների սակագներինը՝ 100.2%, իսկ հունվար-փետրվարին 2001թ. հունվար-փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար 100.6%, 101.1, 99.0 և 100.2%:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2002թ. հունվար-փետրվարին տոկոսներով (նախորդ ամիսը = 100)



**Արտարժույթային շուկա:** 2002թ. փետրվարին հունվարի համեմատ սպառողական շուկայում գրանցված 0.7% գնանկումը ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.2% հավելաճով: Փետրվարին 2001թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի հավելաճը կազմել է համապատասխանաբար 1.5% և 0.1%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների 3.6% հավելաճի դիմաց գրանցվել է հաշվարկային փոխարժեքի 0.4% նվազում: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2002թ. փետրվարին կազմել է 565.35 դրամ, ինչը 2.4% գերազանցել է 2001թ. փետրվարի համապատասխան ցուցանիշը (552.17 դրամ):

**Պարենային ապրանքների գներ:** Պարենային ապրանքների շուկայում 2002թ. փետրվարին հունվարի համեմատ արձանագրվել է 0.5% գնանկում, պայմանավորված բանջարեղենի և կարտոֆիլի, ձվի, ինչպես նաև մսամթերքի ապրանքախմբերում գրանցված գնանկումով:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2002թ. փետրվարին 2001թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է 19.9% գնաճ, իսկ 2002թ. հունվարի համեմատ՝ 2.3% գնանկում: Վերջինս հիմնականում պայմանավորված է ճակնդեղի (19.5%), գազարի (16.7%), գլուխ սոխի (6.4%), կաղամբի (5.9%), լուլիկի (3.4%), կարտոֆիլի (2.4%) գնանկումով: Հանրապետությունում դիտարկված 3 բնակավայրերում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի 5.3-1.8% գնանկում, ընդ որում գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք.Երևանում: Դիտարկվող մյուս 7 բնակավայրերում բանջարեղենի և կարտոֆիլի գներն աճել են 0.3-9.4%:

2002թ. հունվարին գրանցված ձվի 12.4% գնաճին փետրվարին հաջորդել է 2.4% գնանկում: Հանրապետությունում դիտարկված 8 բնակավայրերում ձվի գինը նվազել է 9.7-0.9%, իսկ քք. Մարտունի և Կապան պահպանվել է հունվարին գրանցված գնի մակարդակը:

2002թ. փետրվարին հունվարի համեմատ մսամթերքի ապրանքախմբում գրանցվել է 1.9% գնանկում, ինչը խոզի (4.7%), ոչխարի (3.3%) և տավարի (3.0%) մսի գների նվազման արդյունք է: Հանրապետության դիտարկված բնակավայրերից 7-ում մսամթերքի գները նվազել են 3.3-0.5% (գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Թալինում), իսկ մյուս 3 բնակավայրերում արձանագրվել է 0.4-2.0% գնաճ:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում 2002թ. փետրվարին հունվարի համեմատ գրանցվել է 4.5% գնանկում, ընդ որում, ոգելից խմիչքի գները նվազել են 0.1%, իսկ ծխախոտինը՝ 5.3%: Վերջինս պայմանավորված է տեղական արտադրության ծխախոտի գների նվազմամբ:

Հրուշակեղենի, սուրճի, թեյի, կակաոյի, հացամթերքի ապրանքախմբերում 2002թ. փետրվարին հունվարի համեմատ արձանագրվել է 0.2-0.1% գնանկում:

2002թ. փետրվարին հունվարի համեմատ մրգի ապրանքախմբում գրանցվել է 0.4% գնաճ՝ 2001թ. նույն ժամանակահատվածի 5.0% գնանկման դիմաց: 2002թ. փետրվարին արձանագրված մրգի գնաճը խաղողի (2.7%), կիտրոնի (3.4%), մանդարինի (12.9%) գնաճի հետևանք է: Միաժամանակ, 2.3-0.1% նվազել են նարնջի, խնձորի և տանձի գները: ՀՀ դիտարկված 5 բնակավայրերում մրգի գնաճը կազմել է 0.3-12.6% (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Թալինում), իսկ մյուս 5 բնակավայրերում գրանցվել է 5.3-1.1% գնանկում:

Ձկնամթերքի ապրանքախմբում 2002թ. հունվարին արձանագրված 13.1% գնանկմանը փետրվարին հաջորդել է 7.2% գնաճ, պայմանավորված թարմ (սիգ) և ապխտած ձկան համապատասխանաբար 7.5 և 7.4% գնաճով: Դիտարկված 8 բնակավայրերում ձկնամթերքի գնաճը կազմել է 1.7-46.4% (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Եղեգնաձորում), իսկ Գյումրի և Թալին քաղաքներում գրանցվել է համապատասխանաբար 9.6% և 8.7% գնանկում:

2002թ. փետրվարին հունվարի համեմատ կենդանական և բուսական յուղի, շաքարավազի, ոչ ոգելից խմիչքի ապրանքախմբերում արձանագրվել է 0.1-0.4% գնաճ, իսկ կաթնամթերքի գները մնացել են հունվարի գների մակարդակին:

**Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի**

(տոկոսներով)

	<b>2002 թ վ ա կ ա ն ի</b>			
	հունվարը	փետրվարը	փետրվարը	հունվար-փետրվարը
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. հունվարի նկատմամբ	2002թ. հունվարի նկատմամբ	2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ
<b>Պարենային ապրանքներ</b> (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	103.3	102.3	99.0	101.1
<b>Պարենային ապրանքներ</b> հացամթերք	103.7	103.2	99.5	100.7
	99.8	99.8	99.9	98.3

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	2002 թվականի			
	հունվարը	փետրվարը	փետրվարը	հունվար-փետրվարը
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ		2002թ. հունվարի նկատմամբ	2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ
մսամբերք	101.5	99.6	98.1	105.4
ծկնամբերք	86.9	93.1	107.2	128.2
կաթնամբերք	101.3	101.3	100.0	101.0
ծու	112.4	109.7	97.6	106.3
կենդանական և բուսական յուղ	100.4	100.5	100.1	100.1
միրգ	112.7	113.1	100.4	118.9
բանջարեղեն և կարտոֆիլ	122.7	119.9	97.7	91.3
շաքարավազ	100.8	100.9	100.1	102.4
սուրճ, թեյ, կակաո	99.8	99.6	99.8	99.1
հրուշակեղեն	99.9	99.8	99.8	99.6
ոչ ռզելից խմիչք	101.0	101.4	100.4	99.0
<i>Ռզելից խմիչք և ծխախոտ</i>	100.0	95.5	95.5	101.3

**Ոչ պարենային ապրանքների գներ.** Ոչ պարենային ապրանքների շուկայում 2002թ. փետրվարին հունվարի համեմատ գների 0.2% նվազումը հիմնականում պայմանավորվել է շինանյութերի (2.3%), դեղամիջոցների (1.1%) գնանկումով: Նշված ժամանակահատվածում այգեգործական ապրանքների, կոշկեղենի, հագուստի և կտորեղենի, կենցաղային էլեկտրաապրանքների, խոհանոցային սպասքի, գեղահարդարման, անձնապիտո ապրանքների գները նվազել են 0.3-0.1%: Ոսկերչական ապրանքների, լվացամիջոցների, գորգեղենի, մշակույթի ապրանքների գներն աճել են 0.1-0.6%, իսկ վառելիքի, կահույքի, տեքստիլեղենի, գրենական պիտույքների գները մնացել են հունվարի գների մակարդակին:

2002թ. փետրվարին հունվարի համեմատ գրանցվել է բենզինի 0.7% գնանկում, իսկ դիզելային վառելիքի գինը նշված ժամանակահատվածում աճել է 1.5%: 2002թ. փետրվարին 2001թ. դեկտեմբերի համեմատ բենզինի գնանկումը կազմել է 3.2%, դիզելային վառելիքինը՝ 4.0%:

**Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները**

(տոկոսներով)

	2002 թվականի			
	հունվարը	փետրվարը	փետրվարը	հունվար-փետրվարը
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ		2002թ. հունվարի նկատմամբ	2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ
<b>Ոչ պարենային ապրանքներ</b>	99.7	99.5	99.8	99.0
<i>այդ թվում՝</i>				
հագուստ և կտորեղեն	100.2	100.1	99.9	100.3
վառելիք	99.9	99.9	100.0	94.4
կահույք	99.9	99.9	100.0	101.0
գորգեղեն	100.7	100.8	100.1	100.6
տեքստիլեղեն	100.1	100.1	100.0	100.1
կենցաղային էլեկտրաապրանքներ	99.1	99.0	99.9	98.4
խոհանոցային սպասք	100.1	100.0	99.9	102.9
լվացամիջոցներ	99.9	100.0	100.1	106.5
շինանյութեր	100.0	97.7	97.7	99.7
այգեգործական ապրանքներ	99.9	99.7	99.7	98.7
դեղամիջոցներ	99.3	98.2	98.9	95.1
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	97.4	97.0	99.7	90.5
մշակույթի ապրանքներ	100.1	100.2	100.1	100.5
գրենական պիտույքներ	101.5	101.5	100.0	104.0
գեղահարդարման ապրանքներ	99.8	99.6	99.8	101.6
ոսկերչական ապրանքներ	100.4	101.0	100.6	98.5
անձնապիտո ապրանքներ	100.0	99.9	99.9	99.5

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

**Ծառայությունների սակագներ:** 2002թ. փետրվարին հանրապետությունում արձանագրված ծառայությունների սակագների անփոփոխ ընդհանուր մակարդակի պայմաններում որոշ ծառայությունների գծով գրանցվել են սակագների տարաբնույթ փոփոխություններ: Նշված ժամանակահատվածում կապի ծառայությունների սակագներն աճել են 1.3%, ինչը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 2001թ. դեկտեմբերի 28-ի որոշման համաձայն 2002թ. փետրվարի 1-ից փոստային առաքումների սակագների բարձրացման արդյունք է (փոստային ծառայությունների սակագների հավելաճը փետրվարին հունվարի համեմատ կազմել է 30.6%):

Բուժսպասարկման ծառայությունների սակագներն աճել են 0.1%: Միաժամանակ, սակագների նվազում է արձանագրվել տրանսպորտի ծառայությունների (0.4%՝ կապված միջքաղաքային տրանսպորտի ծառայությունների սակագների 0.7% նվազման հետ), հանգստի կազմակերպման (0.2%), հանրային սննդի (0.1%) կենցաղային ծառայությունների (0.1%) ոլորտում: Բնակարանային-կոմունալ, մշակույթի, կրթության համակարգի, իրավական ու բանկային ծառայությունների սակագները նշված ժամանակահատվածում մնացել են անփոփոխ:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները**

( տոկոսներով)

	2002 թ վ ա կ ա ն ի			
	հունվարը	փետրվարը	փետրվարը 2002թ. հունվարի նկատմամբ	հունվար-փետրվարը 2001թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ			
<b>1 առայություններ, ընդամենը</b>	100.0	100.0	100.0	100.2
<i>այդ թվում՝</i>				
կենցաղային	99.9	99.8	99.9	100.7
բնակարանային-կոմունալ	100.0	100.0	100.0	100.0
բուժսպասարկման	100.3	100.4	100.1	96.3
տրանսպորտի	99.8	99.4	99.6	99.8
կապի	99.7	101.0	101.3	101.6
մշակույթի	100.0	100.0	100.0	102.7
կրթության համակարգի	100.1	100.1	100.0	104.5
հանգստի կազմակերպման	99.4	99.2	99.8	100.3
հանրային սննդի	99.9	99.7	99.9	100.3
իրավական և բանկային	100.0	100.0	100.0	100.0

**Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները:** 2002թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետությունում դիտարկված 7 բնակավայրերում սպառողական գները նվազել են 1.2-0.4% (նվազման անենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Վաղարշապատում): Գյումրի և Կապան քաղաքներում գրանցվել է համապատասխանաբար 0.1% և 0.6% գնաճ, իսկ Մարտունիում պահպանվել է սպառողական գների հունվարի մակարդակը:

Պարենային ապրանքների շուկայում 2002թ. փետրվարին հունվարի համեմատ դիտարկված 4 բնակավայրերում արձանագրվել է գների 1.1-0.4% նվազում, իսկ մյուս 6-ում՝ 0.1-1.3% գնաճ:

**Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2002թ. փետրվարի 28-ի դրությամբ**

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Ձու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
<b>ՀՀ, միջինը</b>	1061	1317	1486	563	467	260	151	167	82	269
<i>այդ թվում՝</i>										
Երևան	1058	1367	1533	575	478	262	149	170	91	269
Գյումրի	1050	1263	1417	557	450	260	155	160	60	367
Վանաձոր	1000	1150	1383	540	440	251	141	150	50	265

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Միստավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
Վաղարշապատ	1150	1300	1300	520	450	255	170	130	60	230
Թալին	1100	1400	1450	540	450	260	170	150	100	250
Դիլիջան	1150	1200	1400	570	450	260	200	150	80	250
Հրազդան, Չարենցավան	1100	1300	1400	560	450	250	150	150	70	220
Եղեգնաձոր	1000	1300	1400	550	475	260	175	150	150	250
Մարտունի	950	1200	1500	550	480	270	110	250	50	300
Կապան	1100	1200	1660	542	450	262	160	170	108	230

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2002թ. փետրվարի 28-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5823 դրամ, ինչը 1.4% ցածր է նույնաժամանակաշրջանի հունվարի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքից (5901 դրամ): Փետրվարի 28-ին հունվարի 30-ին համեմատ նշված պարենային ապրանքատեսակներից մեծ մասի գները նվազել են 9.4-0.1%: Նշված ժամանակահատվածում աճել են միայն պանիրի (0.6%) և շաքարավազի (0.1%) գները: Դիտարկված 5 բնակավայրերում փետրվարի 28-ին հունվարի 30-ի համեմատ վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ընդհանուր արժեքը նվազել է 1.9-0.9% (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Երևանում), 4 բնակավայրերում գրանցվել է 0.1-1.5% գնաճ, իսկ Մարտունիում պահպանվել է հունվարի գների մակարդակը: Փետրվարի 28-ի դրությամբ այս ապրանքների ձեռքբերման ամենաբարձր արժեքն արձանագրվել է ք. Երևանում (5953 դրամ), իսկ ամենացածրը՝ ք. Վանաձորում (5370 դրամ):

Հանրապետությունում դիտարկված 7 բնակավայրերում 2002թ. փետրվարին հունվարի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 1.0-0.1% գնանկում (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Հրազդանում (Չարենցավանում)): Թալին և Մարտունի քաղաքներում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.3%, իսկ Կապանում պահպանվել է հունվարին գրանցված գների մակարդակը:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2002թ. փետրվարին հունվարի համեմատ Երևան և Գյումրի քաղաքներում գրանցվել է սակագների համապատասխանաբար 0.1% և 1.0% հավելաճ, Դիլիջան և Հրազդան (Չարենցավան) քաղաքներում՝ սակագների 0.2% և 1.1% նվազում, իսկ հետազոտված մյուս 6 բնակավայրերում պահպանվել է սակագների հունվարին գրանցված մակարդակը:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2002թ. փետրվարին 2001թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված բնակավայրերի և ապրանքախմբերի**

(տոկոսներով)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
<b>ՀՀ, ընդամենը</b>	101.5	101.7	102.3	103.2	99.5	100.0
<i>այդ թվում.</i>						
Երևան	101.6	101.9	102.5	103.5	99.5	99.9
Գյումրի	102.9	103.2	104.1	104.8	99.1	101.5
Վանաձոր	101.3	101.5	101.7	102.4	100.4	100.0
Վաղարշապատ	100.2	100.3	100.6	101.4	98.6	99.7
Թալին	100.6	100.7	100.9	101.7	99.5	100.5
Դիլիջան	101.5	101.7	102.3	103.4	99.4	100.0
Հրազդան, Չարենցավան	100.7	101.0	101.5	102.2	98.8	98.9
Եղեգնաձոր	101.4	101.6	102.0	103.1	100.0	100.0
Մարտունի	101.3	101.5	101.9	102.6	99.8	100.0
Կապան	101.6	101.9	102.6	103.4	99.1	99.8

**Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս:** 2002թ. փետրվարին հունվարի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գնաճը կազմել է 0.8%, ինչը հիմնականում պայմանավորվել է հրատարակչական գործերի արտադրության (10.9%), քիմիական, նավթաքիմիական ու քիմիադեղագործական (9.2%), անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի (9.1%), գունավոր մետալուրգիայի (7.0%), թեթև արդյունաբերության (3.3%) թողարկած արտադրանքի գների և էլեկտրաէներգետիկայի սակագների (1.7%) հավելաճով: Նշված ժամանակահատվածում այլ արդյունաբերական արտադրության (ոսկերչական արդյունաբերության) թողարկած արտադրանքի գներն աճել են 0.2%, իսկ շինանյութերի, մեքենաշինության և սննդի (ներառյալ ալյուրի և համակցված կերերի) արդյունաբերության թողարկած արտադրանքի գները նվազել են համապատասխանաբար 4.4%, 2.2 և 2.2%:

2002թ. փետրվարին 2001թ. փետրվարի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 100.9%:

**Բեռնափոխադրումների սակագների ինդեքս:** 2002թ. փետրվարին հունվարի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճը կազմել է 0.1%, ինչը երկաթուղային և խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների համապատասխանաբար 0.4% և 0.1% հավելաճի արդյունք է: Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նշված ժամանակահատվածում նվազել են 0.2%, իսկ օդային տրանսպորտում պահպանվել է հունվարին գրանցված սակագների մակարդակը:

2002թ. փետրվարին 2001թ. փետրվարի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 102.0%, այդ թվում երկաթուղային տրանսպորտով՝ 101.6%, ավտոմոբիլայինով՝ 100.2%, օդայինով՝ 101.9%, խողովակաշարային տրանսպորտով՝ 102.1%, իսկ հունվար-փետրվարին նախորդ տարվա հունվար-փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար 101.9%, 101.8, 98.1, 101.7 և 101.9%:

**Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս:** 2002թ. փետրվարին 2001թ. դեկտեմբերի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գնանկումը կազմել է 3.6%, իսկ 2002թ. հունվարի համեմատ՝ 4.2%: Վերջինիս մեծապես նպաստել է շուկայում և անհատ քաղաքացիներին իրացված գյուղատնտեսական մթերքի համապատասխանաբար 4.5% և 4.4% գնանկումը: Մթերող կազմակերպություններին իրացված գյուղատնտեսական մթերքի գները նշված ժամանակահատվածում աճել են 0.9%:

2002թ. փետրվարին հունվարի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բուսաբուծական մթերքի իրացման 6.8% գնանկում:

**Գյուղատնտեսական մթերքի իրացման միջին գները ԳՀ-ում 1998-2002թթ. փետրվարին**

(դրամով)

	Չափի միավորը	1998	1999	2000	2001	2002
Ցորեն	կգ	163	99	101	106	102
Գարի	- „,-	131	99	78	90	93
Լոբի	- „,-	262	354	315	425	421
Կարտոֆիլ	- „,-	124	97	80	113	122
Կաղամբ	- „,-	71	53	27	86	36
Գազար	- „,-	72	54	41	52	44
Գլուխ սոխ	- „,-	183	141	55	218	148
Խնձոր	- „,-	153	133	99	125	125
Տանձ	- „,-	209	183	131	127	144
Ընկույզ (կեղևով)	- „,-	680	700	641	803	907
Մեղր	- „,-	2339	2562	2437	2674	2732
Միս տավարի	- „,-	864	823	803	819	884
Միս ոչխարի	- „,-	839	845	790	804	838
Միս խոզի	- „,-	1442	770	823	1095	979

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Չափի միավորը	1998	1999	2000	2001	2002
Կաթ	լ	148	113	126	110	104
Մածուց	- „,-	191	187	172	182	186
Պանիր (յուղոտ)	կգ	928	917	880	856	800
Չու	հատ	55	49	48	45	45
Միամյա խոտեր	կգ	27	23	23	34	18
Բազմամյա խոտեր	- „,-	33	27	20	27	28

2002թ. փետրվարին հունվարի համեմատ անասնապահական մթերքի իրացման գները նվազել են 3.4%, ինչը պայմանավորվել է անհատ քաղաքացիներին և շուկայում իրացված անասնապահական մթերքի համապատասխանաբար 3.9% և 3.4% գնանկունով: Նշված ժամանակահատվածում մթերող կազմակերպություններին իրացված անասնապահական մթերքի գներն աճել են 5.3%:

2002թ. փետրվարին 2001թ. փետրվարի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը կազմել է 97.2%, այդ թվում բուսաբուծականինը՝ 99.1%, անասնապահականինը՝ 96.3%, իսկ 2002թ. հունվար-փետրվարին 2001թ. հունվար-փետրվարի համեմատ՝ համապատասխանաբար 99.3%, 99.9 և 99.0%:

**Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի**

(տոկոսներով)

	Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2002թ. փետրվարին		2002թ. փետրվարին	
	2002թ. հունվարի նկատմամբ	2001թ. փետրվարի նկատմամբ	2002թ. հունվարի նկատմամբ	2001թ. փետրվարի նկատմամբ
<b>ՀՀ, ընդամենը</b>	95.8	97.2	100.2	99.7
այդ թվում.				
Արագածոտն	96.0	100.1	99.2	112.9
Արարատ	84.6	105.1	99.2	104.2
Արմավիր	99.4	102.3	97.9	99.9
Գեղարքունիք	94.2	97.1	100.4	97.3
Լոռի	96.8	102.5	98.0	97.7
Կոտայք	93.0	94.6	100.6	102.4
Շիրակ	99.5	91.4	98.8	101.7
Սյունիք	95.9	90.5	98.1	101.7
Վայոց ձոր	89.2	105.9	99.2	97.4
Տավուշ	93.6	101.7	100.2	105.5

2002թ. փետրվարին 2001թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների 1.1%, իսկ 2002թ. հունվարի համեմատ՝ 0.2% հավելաճ, ինչը պայմանավորվել է սերմացուների և տնկիների (31.4%), մեքենա-սարքավորումների և պահեստամասերի (13,8%), անասունների (5.3%), բույսերի պաշտպանության միջոցների (2.9%) գնման գների և գյուղատնտեսական վճարովի ծառայությունների սակագների (5.8%) հավելաճով: Նշված ժամանակահատվածում պարարտանյութերի, գյուղատնտեսական մանր գործիքների, անասնակերի, էներգիայի և քսայուղերի գնման գները նվազել են 25.6-0.2%, իսկ շինանյութերի գնման գները մնացել են հունվարի գների մակարդակին: